ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՌՈՒՍ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈԿՐԱՏԸ

(Ն. Դ. Չերնիշևսկու ծննդյան 150-ամյակի առթիվ)

Ք. Հ. ՊԱԽԱՆՅԱՆՑ

Ռուս հեղափոխական-դեմոկրատ, սոցիալիստ, աննկուն քաղաքական մարտիկ, ականավոր մտածող-մատերիալիստ, բոցաշունչ հրապարակախոս, գրող, քննադատ, գրականության տեսաբան ու պատմաբան Նիկոլայ Գավրիլովիչ Չերնիշևսկին այն համապարփակ անձնավորությունն էր, որը դարձավ իր ժողովրդի հոգևոր ու քաղաքական առաջնորդը նրա զարգացման մի ողջ դարաշրջանում։ Չերնիշևսկու բազմակողմանի գործունեությունը նպատակամղվել է ժողովրդական հեղափոխության, հասարակության հեղափոխական վերափոխման գաղափարին։

Չերնիշևսկին պատմական ասպարեզ իջավ XIX դարի 50—60-ական թթ.։ Դա Ռուսաստանի պատմության առավել լարված, սոցիալ-քաղաքական նշանավոր իրադարձություններով հագեցած ժամանակաշրջաններից մեկն էր։ Այդ տարիներին, որպես ակտիվ առաջադիմական ուժ, հին, ազնվականական ինտելիգենցիային աստիճանաբար փոխարինելու էր գալիս ռազնոչին ինտելիգենցիան՝ հոգևորականության, քաղքենիների, գյուղացիների, վաճառականների, մանր սպասավոր մարդկանց երեխաները, որոնք ազատ էին ազնվականական հասարակության նախապաշարումներից, մոտ էին կանգնած ժողովրդին։ Հենց նրանք, այդ հեղափոխականներն են դառնում գյուղացիության արմատական շահերի արտահայտիչներն ու պաշտպանները, հանդիսանալով ռուսական ազատագրական շարժման երկրորդ, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ՝ «ռազնոչին կամ բուրժուա-դեմոկրատական» ժամանակաշրջանի գլխավոր ղեկավար ուժը։ Այն ժամանակ դեռևս խիստ սակավաթիվ այդ հեղափոխականների գլուխ էլ կանգնեց Ն. Դ. Չերնիշևսկին։

Շատ վաղ հաղթահարելով լիբերալ-միապետական իր որոշ պատրանքները, արդեն ուսանողական տարիներին Չերնիշևսկին դառնում է հետևողական հեղափոխական և դեմոկրատ, իրեն գիտակցաբար պատրաստում է հեղափոխական գործունեության։ Նա իր օրագրում գրում է. «Ինձ թվում է, թե մարդկության վերջնական նպատակների մասին իմ համոզմունքներով ես վճռականորեն դարձա սոցիալիստների և կոմունիստների ու ծայրահեղ հանրապետականների պարտիզան»[1]։

Սկսած 1853 թ. դեմոկրատական, հեղափոխական աշխարհայացքի տրիբունա է դառնում «Современник» *հանդեսը, որտեղ Չերնիշևսկին, շուտով*

---

[1] Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, М., 1939—1953, т. I, *էջ 122։ (Այսուհետև Չերնիշևսկու երկերից մեջբերումները կատարվում են այս հրատարակությունից, նշելով հատորն ու էջերը)։*

առաջատար գիրք գրավելով, խարազանում է ճորտատիրությունը, քաղաքական ու ամեն տեսակ այլ խավարամոլությունը, մերկացնում ռեակցիան ու լիբերալիզմը, պրոպագանդում քաղաքական, տնտեսական, գեղագիտական, գիտական, փիլիսոփայական առաջադիմական գաղափարներ։ «Յոթ տարի Նեկրասովի հետ միասին նա գլխավորում էր «Современник» հանդեսը, որը նրանց ջանքերով վերածվեց հեղափոխական մտքի մարտնչող, մարտական օրգանի և այն տարիներին բացառիկ կարևոր դեր խաղաց ռուս հասարակության կյանքում»[2]։

Չերնիշևսկին վաթսունական թվականների իր մի ամբողջ շարք սուր բանավիճային և մարտական հոդվածներում փայլուն վերլուծության է ենթարկում ժամանակակից ռուսական հասարակությունը, բացահայտում ճորտատիրության սոցիալ-տնտեսական և պատմական արմատները։ Նա ցույց տվեց, որ գյուղացիների ճորտացումը տեղի է ունեցել Ռուսաստանի կյանքում կատարված որոշակի փոփոխությունների հետևանքով, որոնք կապված էին խոշոր հողատիրության զարգացման և կալվածատերերի կողմից գյուղացիական հողերի բռնագրավման հետ։ Դրա հետևանքով առաջացավ մի դասակարգ, որն սկսեց ապրել «տերունական» հողի վրա աշխատող գյուղացիների վաստակով ստեղծվող ռենտայի հաշվին։ Չերնիշևսկին դրանում տեսավ ճորտատեր-կալվածատերերի պատմական դերի «արմատը»։ «Այն դասակարգը, որին ռենտա է տրվում, միշտ լինում է պահպանողական դասակարգ, որը պայքարում է ընդդեմ ամեն մի առաջադիմության» (IV, 513)։ Ելնելով դրանից, Չերնիշևսկին հանգում է հետևյալ հեղափոխական եզրակացությանը. քանի որ պարազիտային, ռեակցիոն դասակարգը երբեք կամավոր չի զիջի ո՛չ իր հարստությունները, ո՛չ իր արտոնությունները, ո՛չ էլ իր իշխանությունը, ճորտատիրական այդ իրավակարգը կարող է ոչնչացվել միայն ժողովրդական հեղափոխության միջոցով։

Չերնիշևսկին Ռուսաստանի հասարակական զարգացման գործում ոչ նվազ շարիք էր համարում նաև ինքնակալությունը։ Նա մերկացնում էր այն լիբերալ հրապարակախոսներին, որոնք ձգտում էին ապացուցել ցարական պետության կարծեցյալ վերդասակարգայնությունը, որն, իբր, «ընդհանրապես դասային բոլոր շահերից անսահմանորեն բարձր» է կանգնած։

Գրաքննության ճնշման տակ հնարավորություն չունենալով ուղղակիորեն խոսելու ռուսական իրականության մասին, Չերնիշևսկին այլաբանորեն վկայակոչում էր Ավստրիայի, Ֆրանսիայի, Իտալիայի օրինակները։ «Պ. Չիշերինը հրապարակախոս» և այլ հոդվածներում նա հաստատում էր, որ ինքնակալությունը խորթ է, թշնամի «ժողովրդական կյանքի բնական զարգացմանը»։ Չերնիշևսկին անարդանքի սյունին էր գամում ցարիզմին, համարելով այն քմահաճության անսահմանափակ տիրապետություն, նկատի ունենալով գործերի այնպիսի կարգը, երբ գոյություն չունի ոչ մի իրավական անձեռնմխելիություն, երբ կամայականությունից պաշտպանված չեն ո՛չ անհատը, ո՛չ աշխատանքը, ո՛չ սեփականությունը (V, 700)։ Նա գտնում էր, որ միակ ելքը ժողովրդական հեղափոխությունն է։

---

2 Б. Рюриков, Н. Г. Чернышевский. Критико-биографический очерк, М., 1961, էջ 25։

Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացմանը մղում էր կապիտալիզմի ուղին թեակոխած հասարակության տնտեսական ու քաղաքական զարգացումը։ 60-ական թթ. ստեղծված հեղափոխական իրադրությունից վախեցած և դրանից ելք չտեսնելով, Ալեքսանդր II-ի կառավարությունը որոշեց ճորտատիրական իրավունքը վերացնել «վերևից»։

Չնայած այն հանգամանքին, որ Չերնիշևսկին, Լենինի բառերով ասած, հիանալի հասկանում էր «գյուղացիական ռեֆորմի սահմանափակությունն ու խղճուկությունը», նրա թալանչիական, «ճորտատիրական» բնույթը, այնուամենայնիվ նա ճիշտ էր համարում 1857 թ. ցարական ռեսկրիպտների քննարկմանն ակտիվ մասնակցելը։ «Գյուղական կենցաղի նոր պայմանների մասին», «Ճորտ գյուղացիների հետգնման եղանակների մասին», «Դժվա՞ր է արդյոք հողերի հետգնումը», «Ճորտատիրական հարցի լուծման նյութերը» հոդվածներում Չերնիշևսկին քողարկված ձևով մերկացրել է ճորտատերերի և կառավարության եսասիրական դասակարգային նկրտումները, հմտորեն պսակաղերծել սպասվող ռեֆորմի հակաժողովրդական էությունը։

Մեծ նշանակություն ունեն Չերնիշևսկու աշխատությունները քաղաքատնտեսության վերաբերյալ։ Կ. Մարքսը գրել է, որ Չերնիշևսկին որպես տընտեսագետ վարպետորեն է հայտնաբերել «բուրժուական քաղաքատնտեսության սնանկությունը»[3]։ «Քաղաքատնտեսության ակնարկներ» (ըստ Միլի), «Կապիտալ և աշխատանք», «Տնտեսական գործունեությունն ու օրենսդրությունը» և այլ աշխատություններում Չերնիշևսկին բացահայտել է կապիտալիզմի սոցիալ-տնտեսական հակասությունները, նրա անբարյացակամությունը «աշխատավորների դասի» նկատմամբ, բուրժուական պետության հակաժողովրդական բնույթը։

Ի հակակշիռ բուրժուական տնտեսագիտական տեսության, Չերնիշևսկին զարգացրեց «աշխատավորների քաղաքատնտեսությունը», որի հիմքում ընկած էր «սեփականատիրոջ և աշխատողի լրիվ միավորումը միևնույն անձի մեջ»։ «Աշխատանքը,— ասում էր նա,— պետք է դադարի «ծախու ապրանք» լինելուց»։

Չերնիշևսկու տնտեսագիտական ուսմունքի մեջ, անշուշտ, ամեն ինչ չէ, որ հավասարազոր է։ Նրա աշխատություններում կան որոշ անճշտություններ և ուտոպիզմի տարրեր։ Նրան չի հաջողվել գիտականորեն բացահայտել արտադրության կապիտալիստական եղանակի օբյեկտիվ օրենքները. դասակարգերի նրա բնորոշման մեջ առաջին տեղն էին դրվում եկամուտների չափն ու դրանց ստացման եղանակը, այլ ոչ թե մարդկանց վերաբերմունքը արտադրության միջոցների նկատմամբ։

Ռուսաստանի սոցիալ-տնտեսական հետամնացությունը, նրա բանվոր դասակարգի սակավությունը, թուլությունն ու անկազմակերպվածությունը խանգարում էին Չերնիշևսկուն տեսնելու պրոլետարիատի պատմական դերը որպես կապիտալիզմի գերեզմանափորի և սոցիալիզմի համար մղվող պայքարի ղեկավարի։ Նա հավատացած էր, որ թե՛ բուրժուական Եվրոպան, թե՛ ճորտատիրական Ռուսաստանը անխուսափելիորեն կգնան դեպի սոցիալիզմ, և որ այդ ճանապարհն անցնում է հին աշխարհի պաշտպանների դեմ մղվող համառ ու ծանր պայքարի միջով, սակայն գտնում էր, որ Ռուսաստանն ու

[3] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. 2-е, т. 23, էջ 18։

Արևմտյան Եվրոպան դեպի սոցիալիզմ կգնան տարբեր ճանապարհներով։ Չերնիշևսկին ենթադրում էր, որ Ռուսաստանը կարող է շրջանցել զարգացման կապիտալիստական փուլը և ֆեոդալաճորտատիրական կարգից՝ գյուղացիական համայնքների միջոցով անցնել սոցիալիզմին։ Նա հավատացած էր, որ գյուղացիական հեղափոխությունը, որն այնքան կրքոտությամբ ցանկանում էր ինքը և դեպի որն անդուլ կերպով կոչ էր անում, կրելու է սոցիալիստական բնույթ։ Դրանում էր Չերնիշևսկու ուտոպիզմը։ Վ. Ի. Լենինը նրան անվանում էր ռուս մեծ սոցիալիստ-ուտոպիստ։ Հենց Լենինն էլ բացատրում էր Չերնիշևսկու խոր, էական տարբերությունը արևմտաեվրոպական սոցիալիստ-ուտոպիստներից։ Ի տարբերություն նրանցից Չերնիշևսկին երբեք ռեֆորմատոր չի եղել։ Նա լավ էր գիտակցում Սեն-Սիմոնի և Շարլ Ֆուրյեի՝ շահագործման ու ճնշման վրա հիմնված հասարակության խաղաղ ճանապարհով սոցիալիզմին հասնելու հնարավորության ֆիլանտրոպիկ հույսերի անիրագործելիությունը։ Չերնիշևսկին եղել է և մնում է համոզված, մարտնչող հեղափոխական։

Մեծ է Չերնիշևսկու ավանդը ռուսական մատերիալիստական փիլիսոփայության զարգացման մեջ։ Նրա մերձավորագույն նախորդներն ու ուսուցիչներն այս բնագավառում Բելինսկին ու Գերցենն էին։ Չերնիշևսկու «Մարդասիրական սկզբունքը փիլիսոփայության մեջ», «Մարդկային գիտելիքի բնույթը», «Արվեստի էսթետիկական հարաբերություններն իրականության հետ» և դրանց հետ առնչվող «Գոգոլյան շրջանի ռուս գրականության ուրվագծեր» և այլ փիլիսոփայական աշխատություններ մի ողջ դարաշրջան կազմեցին Ռուսաստանում մատերիալիստական մտքի զարգացման մեջ, նշանակալից փուլ հանդիսացան իդեալիզմի դեմ մատերիալիզմի մղած պայքարում։ Գնահատելով դրանք, Լենինը գրել է. «Չերնիշևսկին միակ իրոք մեծ ռուս գրողն է, որ կարողացել է 50-ական թվականներից մինչև 88 թվականը մնալ ամբողջական փիլիսոփայական մատերիալիզմի մակարդակի վրա...»[4]։

Չերնիշևսկու փիլիսոփայությանը խորթ է վերացական հայեցողականությունը։ Այն սերտ կերպով կապված է կյանքի հետ, հասարակական-քաղաքական կոնկրետ պրոբլեմների հետ, դարձել է կարևորագույն զենք ճորտատիրական իրականության դեմ մեծ հեղափոխական-դեմոկրատի մղած պայքարում։ Չերնիշևսկին համոզված էր, որ առանց առաջավոր փիլիսոփայության հնարավոր չէ առաջադիմական քաղաքական գործունեություն։

Չերնիշևսկին մատերիալիստորեն էր լուծում փիլիսոփայության հիմնական հարցը։ Աշխարհում գոյություն ունեցող ամեն բան ոչ այլ ինչ է, եթե ոչ «տարատեսակ մատերիա՝ տարատեսակ հատկություններով»։ Չերնիշևսկին իր մատերիալիստական հայացքները հիմնավորում և ամրապնդում էր բնագիտության՝ բժշկության, ֆիզիոլոգիայի, քիմիայի նվաճումներով։ Մարդու գիտակցությունը, մտածողությունը, հոգեկան պրոցեսները Չերնիշևսկին նույնպես վերագրում էր նրա ֆիզիկական էությանը, դրանցում տեսնում էր մատերիայի բացառիկ հատկությունը։ Սակայն այստեղ նա չափից ավելի էր ընդգծում այն միտքը, թե մարդը բնության մի մասն է, չէր կարողանում մինչև վերջ հետևողականորեն բացահայտել մարդկային մտածողության, մարդկային գիտակցության սոցիալական, հասարակական պայմանավորվածությունը։

---

4 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 14, էջ 484։

Դրանում էր ռուս փիլիսոփայի մատերիալիզմի **սահմանափակությունը**։ Ինքը Չերնիշևսկին իր մատերիալիզմն անվանում էր մարդասիրական (անտրոպոլոգիական), որով ընդգծվում էր ռուս փիլիսոփայի ժառանգական կապը Ֆոյերբախի հետ, որը հսկայական ազդեցություն է ունեցել նրա վրա։ Սակայն չնայած Չերնիշևսկու և Ֆոյերբախի փիլիսոփայական հայացքների ակնհայտ ազգակցությանը, ոչ մի դեպքում նրանց չի կարելի նույնացնել. Չերնիշևսկու փիլիսոփայական մատերիալիզմն ուներ ոչ թե հայեցողական, այլ հեղափոխական, գործնական բնույթ, ներծծված էր դասակարգային պայքարի գաղափարով, որը բոլորովին խորթ էր Ֆոյերբախին։ Կարևոր է նաև այն, որ Բելինսկուց և Հերցենից հետո բազմակողմանիորեն և խորությամբ քննադատելով Հեգելի օբյեկտիվ իդեալիզմը, նրա ուսմունքի երկակիությունն ու հակասականությունը, Չերնիշևսկին, ի տարբերություն Ֆոյերբախի, դուրս չնետեց նրա «հանճարեղ դիալեկտիկան». նա ձգտում էր վերամշակել այն մատերիալիստական ոգով և կիրառել իր մարտական, հեղափոխական նպատակների համար։ Դիալեկտիկան Չերնիշևսկու ձեռքում իսկապես դարձավ «հեղափոխության հանրահաշիվը»։

Մատերիալիզմի իսկական հաղթանակը Չերնիշևսկու կողմից հեղափոխական էսթետիկայի ստեղծումն էր։ Այստեղ ևս իդեալիզմը պարտություն կրեց իր գլխավոր դիրքերում։

Չերնիշևսկու էսթետիկական հայացքները օրգանապես կապված էին նրա քաղաքական ու փիլիսոփայական հայացքների հետ։ Ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատը արվեստը դիտում էր, մի կողմից, որպես կենդանի իրականության արտացոլում և, մյուս կողմից, որպես նրա փոփոխության համար պայքարի հզորագույն գործոն։ Չերնիշևսկու «Արվեստի էսթետիկական հարաբերություններն իրականության հետ» գլխավոր գեղագիտական աշխատությունը հանդիսացավ գրականության և արվեստի մեջ հեղափոխական դեմոկրատիզմի և ռեալիզմի գաղափարների տեսական խոր հիմնավորումն ու զարգացումը։ Ռուսական էսթետիկական մտքի մեջ Չերնիշևսկին եղավ Բելինսկու գաղափարների ուղղակի ժառանգորդն ու շարունակողը։ Չեակերպելով մատերիալիստական էսթետիկայի հիմնական սկզբունքները, նա ճակատամարտ տվեց հեգելյան իդեալիստական էսթետիկային։ Սակայն հարկավոր է միաժամանակ նշել, որ ռուս գիտնականը հեռու էր Հեգելի էսթետիկական դպրոցի նիհիլիստական բացասումից. հարգելով նրա անվիճելի գիտական նվաճումները, Չերնիշևսկին իր առջև խնդիր է դնում ոչ թե դեն նետել այն, այլ հաղթահարել, պահպանելով ու զարգացնելով ողջ արժեքավորն ու արգասավորը, որ կար նրանում։

Չերնիշևսկու մատերիալիզմի և Հեգելի իդեալիզմի սկզբունքային տարբերությունը դրսևորվեց արվեստի էության ըմբռնման արմատական հարցում։ Հեգելի էսթետիկան արվեստը դիտում էր որպես արվեստի ինքնաբացահայտման, նրա իրականացման ձևերից մեկը։ Արվեստի առարկա էր հայտարարվում գեղեցկի կատեգորիան, որը բնորոշվում էր որպես բացարձակ իդեայի արտահայտություն՝ զգայական առարկայի մեջ, որպես անվախճանականի դրսևորում վախճանականի մեջ։ Գեղեցիկն իրականացվում է սոսկ արվեստի մեջ, որը մարդուն էմպիրիկ աշխարհից, ուր թագավորում է «անկարգ պատահականությունների քաոսը», տանում է բացարձակ գեղեցկության

աշխարհը։ Իսկ արվեստի նպատակը հենց իր մեջ է և չպետք է կապված լինի իրականության հետ։

Հեգելի էսթետիկայի այդ իդեալիստական հիմքերը Չերնիշևսկին քննադատում է «ռեալ ուղղության» ոգով։ Գեղեցկի հեգելյան բնորոշումները, գրում է Չերնիշևսկին, այն դարձնում են մեր երևակայության պտուղը։ Դրանցից հետևում է, որ մարդկային կյանքում չկա իսկական գեղեցիկը, որ «արվեստի աղբյուրը իրական կյանքում գեղեցկի թերությունները լրացնելու ձգտումն է» (II, 9), և որ այդ պատճառով արվեստի մեջ գեղեցիկը ավելի բարձր է բնության, իրականության մեջ եղած գեղեցկությունից։ Գեղեցկի էության էսթետիկական պրոբլեմի հետևում կանգնած է այլ, վիթխարի տեսական ու պրակտիկ նշանակություն ունեցող պրոբլեմ՝ արվեստի հարաբերությունը իրականության հետ։

Իդեալիստների «ֆանտաստիկ» կառուցվածքներին Չերնիշևսկին հակադրում է գեղեցկի իր մատերիալիստական ըմբռնումը՝ «գեղեցիկը կյանքն է»։ «Գեղեցիկը այն էակն է, որի մեջ մենք կյանքը տեսնում ենք այնպես, ինչպիսին պետք է լինի ըստ մեր ըմբռնումների»։ «Գեղեցիկ է այն առարկան, որն իր մեջ արտահայտում է կյանքը կամ հիշեցնում է մեզ կյանքի մասին»,— թվում է, թե այդ սահմանումը բավարար չափով բացատրում է բոլոր այն զեպքերը, որոնք մեր մեջ արթնացնում են գեղեցկի զգացմունքը» (II, 9—10)։ Գեղեցիկը կյանքում օբյեկտիվորեն գոյություն ունի նրա մեջ և իրենով բնորոշում է գեղեցիկը արվեստի մեջ։ Գեղեցիկն արվեստի մեջ գեղեցկի արտացոլման վերարտադրությունն է կյանքում։ Իրականությունը՝ ռեալ կյանքը, այլ ոչ թե վերացական գաղափարի, ֆանտազիայի աշխարհն է արվեստի իսկական և միակ աղբյուրը։ «Մեր կողմից առաջադրվող բնորոշումը,— գրել է Չերնիշևսկին,— էսթետիկայի հիմնական իմաստն է դարձնում իրականության արժանիքն ու գեղեցկությունը» (II, 877)։

Սակայն ապացուցելով գեղեցկի օբյեկտիվությունը, Չերնիշևսկին, որպես դիալեկտիկ, միևնույն ժամանակ տեսադաշտից բաց չէր թողնում նաև գեղեցկի ընկալումների և ըմբռնումների մեջ եղած սուբյեկտիվ մոմենտը՝ մարդկային հարաբերությունները, մարդու հայացքները կյանքի նկատմամբ։ Գեղեցկի մեջ դրսևորվում են «մեր իդեալը, մեր ցանկությունների ու մեր սիրո նպատակն ու առարկան» (II, 146)։ Հենց Չերնիշևսկուն է պատկանում գեղեցկի կատեգորիայի սոցիալական արմատների բացահայտումը. «Հասարակ մարդն ու հասարակության բարձր դասակարգի անդամը կյանքն ու կյանքի երջանկությունը միատեսակ չեն ըմբռնում, ուստի և նրանք միատեսակ չեն ըմբռնում նաև մարդկային գեղեցկությունը» (II, 143)։

Չերնիշևսկու առաջ քաշած գեղեցկի տեսությունը կրում է վառ կերպով արտահայտված հեղափոխական բնույթ։ Նա հաստատեց արվեստի մարտական բնույթը, այն տեսակետը, թե արվեստը կոչված է «պայքարելու կյանքի համար» և այն ամենի դեմ, ինչը խոչընդոտում է նրա զարգացումը։ Հեգելականների մեռած, սխոլաստիկական «հավերժական գեղեցկությանը» Չերնիշևսկին հակադրում էր գեղեցկի կենդանի ու կյանքի հետ համատեղ զարգացող մատերիալիստական իդեալը։

Հանդես գալով արվեստի առարկան սոսկ գեղեցկի բնագավառով սահմանափակելու դեմ, Չերնիշևսկին արվեստն անվանում էր «կյանքի դասագիրք», այն համարում էր հասարակության բարոյական շարժիչը, ընգծելով նրա

ակտիվ, վերափոխիչ դերը։ Ի հակակշիռ արվեստի աստիճանական մահացման մասին հեգելականների պնդմանը, մեծ հեղափոխականը հավատում էր նրա հզոր ծաղկմանը ապագա ազատ հասարակության մեջ։

Չերնիշևսկին արվեստի հեղափոխական, մատերիալիստական ըմբռնման դիրքերից էր մոտենում նաև էսթետիկայի այլ հարցերին՝ մասնավորապես ողբերգականի ու կոմիկականի ըմբռնմանը, վեհի ու տիպականի կատեգորիաներին, արվեստի ու գիտության, բովանդակության ու ձևի հարաբերակցության պրոբլեմներին։

Չնայած էսթետիկայի բնագավառում Չերնիշևսկու ուսմունքի որոշ սահմանափակությանը, ոչ մի բան չի կարող նսեմացնել ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատի մատերիալիստական էսթետիկայի հսկայական անանց նշանակությունը։

Չերնիշևսկու դերը, որպես հեղափոխական-դեմոկրատական ուղղության առաջնորդի, վառ կերպով դրսևորվել է նաև նրա գրական քննադատության մեջ. Շարունակելով Բելինսկու ավանդույթները, Չերնիշևսկին պայքարում էր հանուն գրականության բարձր գաղափարայնության և ակտիվ հասարակական ծառայության, հանուն ռեալիզմի։

Չերնիշևսկու քննադատական հոդվածների տարբերիչ գիծը հեղափոխական սկզբունքայնությունն է, հետևողականությունը, դեմոկրատիզմը, հավատարմությունը էսթետիկական բարձր պահանջներին, անողոք վերաբերմունքը ռուս գրականության մեջ պահպանողական երևույթների դեմ։ «Սրամտությունը, սուր ծաղրը, մաղձը, եթե ղրանց տիրապետում է քննադատը,— գրել է Չերնիշևսկին,— պետք է ծառայեն որպես գործիք քննադատության լուրջ նպատակին հասնելու համար, նրա ընթերցողների մեծամասնության ճաշակը զարգացնելու և մաքրելու համար, պետք է միայն միջոց տան նրան համապատասխան ձևով արտահայտելու հասարակության լավագույն մասի կարծիքը» (II, 257)։

Չերնիշևսկին իր առջև նպատակ դրեց վերականգնել ու զարգացնել Բելինսկու մեծ ավանդները, «դատարկախոսության խլամից» մաքրել նրա ժառանգությունը, որը փորձում էին վարկաբեկել և ղրպարտել գրականության բնագավառի ռեակցիոներները։

1855—1856 թթ. «Современник»-ի էջերում տպագրվում են Չերնիշևսկու հռչակավոր «Գոգոլյան շրջանի ռուս գրականության ուրվագծերը»։ Դրան հարում են մի շարք հոդվածներ անցյալի և ներկայի գրականության պրոբլեմների վերաբերյալ։

Անցյալ դարի 50—60-ական թթ. սուր բանավեճ ծավալվեց Պուշկինի և Գոգոլի անունների շուրջը։ Դրան առիթ ծառայեց 1855 թ. ռուս մեծ բանաստեղծի երկերի ետմահու հրատարակությունը, որ իրականացրել էր Պ. Աննենկովը։ «Էսթետիկական» քննադատությունը օգտագործում էր այդ փաստը, հաստատելու համար այն միտքը, թե Պուշկինը իրական կյանքից կտրված մի «օլիմպիական բանաստեղծ» է, որը հեռու է կյանքի ունայնությունից, խորապես արհամարհում է «բոպեի պահանջը», «զուտ ձևի» մի բանաստեղծ, որը համակված է միայն իդեալական ձգտումներով։ Այդ կարգի քննադատները կոչ էին անում գրողներին՝ ընթանալ Պուշկինի «հետքերով» և հանուն «զուտ արվեստի» հրաժարվել հասարակական պայքարին մասնակցելուց։

Գրականության մեջ «պուշկինյան» և «գոգոլյան» ուղղությունների մասին բանավեճը մատերիալիստ-դեմոկրատների և իդեալիստ-լիբերալների միջև եղած առավել լայն սկզբունքային պայքարի դրսևորումն էր։ Դա արտահայտվել է նաև Պուշկինի մասին Չերնիշևսկու դատողություններում։

Բանաստեղծի վիթխարի ծառայությունը Չերնիշևսկին տեսնում էր այն բանում, որ նա «առաջինն սկսեց նկարագրել ռուսական բարքերն ու տարբեր խավերի կյանքը զարմանալի ճշմարտությամբ ու սկզբունքայնությամբ, ...գրականագետին սովորեցրեց գրել այն մասին, ինչը ուշագրավ ու օգտակար է ռուս ընթերցողների համար» (III, 317)։ Չերնիշևսկին պնդում էր, որ պուշկինյան ժառանգության նշանակությունն անանց է։ «Ռուս գրականության հետագա զարգացման ամբողջ հնարավորությունը,— խոր համոզվածությամբ հաստատում էր նա,— նախապատրաստվել և մասամբ դեռ նախապատրաստվում է Պուշկինով»։ Մյուս կողմից, Չերնիշևսկին պնդում էր, որ Պուշկինը ռուս գրականության պահանջմունքներին պատասխանել է նրա զարգացման որոշակի փուլում և որ նոր փուլը՝ գրականության ավելի ու ավելի լայն դեմոկրատացման և հասարակական կյանքում նրա դերի ուժեղացման փուլը, պետք է առաջ քաշեր իր նոր մեծ գրողին, որպիսին դարձավ Գոգոլը, որին Չերնիշևսկին համարեց իր «նշանակությամբ մեծագույն գրողներից», իսկ «գոգոլյան ուղղությունը»՝ «միակ ուժեղը և բեղմնավորը»։

Այսպիսով, Չերնիշևսկու պայքարը «էսթետիկական» քննադատության դեմ պայքար էր հանուն գրականության հասարակական նշանակության, հանուն նրա բարձր գաղափարայնության։ Այդպիսի գրականության մարտական օրինակ էր Գոգոլի ստեղծագործությունը և ավելի լայն՝ «գոգոլյան ուղղության» գրականությունը։ «Գոգոլին է պատկանում այն ծառայությունը,— գրել է Չերնիշևսկին,— որ նա առաջինը ռուս գրականությանը տվեց վճռական ձգտում դեպի բովանդակություն, ընդ որում ձգտում դեպի այնպիսի արդյունավետ ուղղությունը, ինչպիսին քննադատականն է» (III, 19)։

Չերնիշևսկու գիտակցության մեջ Բելինսկու և Գոգոլի անունները մերձեցել էին գաղափարական ազգակցությամբ։ Պատահական չէ, որ Բելինսկին Գոգոլին դարձրել էր իր դրոշը և բնորոշում էր նրան որպես «բանաստեղծների գլխավորը»։ Բացահայտելով Բելինսկու այդ միտքը, Չերնիշևսկին գրել է. «Գոգոլը կարևոր է... նաև որպես դպրոցի գլխավորող, միակ դպրոցի, որով կարող է հպարտանալ ռուս գրականությունը» (III, 20)։ Ռուս գրականության հետագա հաջող զարգացումը, նրա կարծիքով, հնարավոր է միայն գոգոլյան ուղղության ճանապարհով։ Ժամանակակից գրական շարժման մեջ նա հետևողականորեն պաշտպանում էր այդ ուղղությանը հավատարիմ գրողներին, որոնք «ուսանել էին» Գոգոլի և Բելինսկու դպրոցում՝ Նեկրասովին, Տուրգենևին, Օստրովսկուն, Սալտիկով-Շչեդրինին։ Նեկրասովին Չերնիշևսկին բարձր էր գնահատում ամենից առաջ որպես հեղափոխական դեմոկրատիայի բանաստեղծ-տրիբուն, որն ստեղծել է իր դարաշրջանի առաջավոր մարդկանց գեղեցիկ «մտքի պոեզիա» և «սրտի պոեզիա»։ Տուրգենևի ստեղծագործության մեջ տեսնելով «մեր գրականության պատիվը» (XIV, 333), համարելով նրան մեծ գրող, Չերնիշևսկին միևնույն ժամանակ քննադատում էր նրա ստեղծագործության մեջ այն, ինչը նրան թվում էր սխալ ու վնասակար։

Ժամանակակից որոշ գրողների ստեղծագործություններում քննադատը հմտորեն նկատել է «այն գաղափարների առավել խոր ու բավարար զարգաց-

ման գրականը, որոնք Գոգոլն ընդգրկել է միայն մի կողմից» (III, 10)։ Սոցիալական շարիքի մերկացման մեջ Գոգոլից ավելի հեռուն գնաց Սալտիկով-Շչեդրինը։ Չերնիշևսկին առաջիններից մեկը նկատեց և ողջունեց այդ։ Նա գրել է, որ ոչ ոք Շչեդրինից առաջ «չի մերկացրել մեր հասարակական արատներն ավելի դառն խոսքերով, չի ցուցադրել մեր առջև մեր հասարակական խոցերն ավելի անխնա» (IV, 267)։ Շչեդրինը Գոգոլից ավելի խիստ, ավելի դաժան էր «դատում» կյանքը և դրա պատճառը քննադատը արդարացիորեն տեսնում էր գրողի հեղափոխական աշխարհայացքում։

Չերնիշևսկին բացառիկ խորաթափանցություն դրսևորեց երիտասարդ Տոլստոյի նկատմամբ։ Դեռևս սկսնակ գրողի մեջ նա զգաց Տոլստոյի ամբողջ հանճարեղությունը և բացառիկ սկզբունքայնությամբ բնորոշեց նրա տաղանդը։

Ժամանակակից գրողների՝ Օստրովսկու, Ն. Ուսպենսկու, Պիսեմսկու, Ավդեևի, Ե. Տուրի և այլոց մասին իր ելույթներում Չերնիշևսկին աշխուժորեն արձագանքում է նրանց երկերում առաջ քաշված նոր ու առաջավոր մտքերին, անխնա քննադատում այն բոլոր հետադիմական, իրենց դարն ապրած գաղափարները, որոնք գրականությունը ետ են քաշում ռուսական իրականության սուր պրոբլեմներից։

Չերնիշևսկու քաղաքական, փիլիսոփայական և էսթետիկական հայացքներն իրենց մարմնացումն են գտել նրա գեղարվեստական ստեղծագործություններում՝ «Ի՞նչ անել», «Պրոլոգ» վեպերում, «Ալֆերև», «Պատմվածքներ պատմվածքների մեջ» և այլ պատմվածքներում։ Դրանցից առավել նշանակալիցը «Ի՞նչ անել» վեպն է, որ նա գրել է Պետրոպավլովյան ամրոցում բանտարկված ժամանակ։ Բթացնելով պահնորդության զգոնությունը, դիմելով «եղովպոսյան» լեզվի և այլաբանության, Չերնիշևսկին ելք գտավ գեղարվեստական ձևի միջոցով շարունակելու ագիտատորի, հեղափոխական շարժման առաջնորդի իր գործունեությունը։

Վեպն իր ողջ բովանդակությամբ ուղղված էր «ճղճիմ» ու «անպետք» իրականության դեմ, կոչ էր անում հեղափոխական պայքարի, կյանքի սոցիալական վերափոխման և ցույց էր տալիս այն ուղիներն ու հասարակական ուժերը, որոնք ընդունակ են կատարելու այդ։ «Ի՞նչ անելը» առաջին սոցիալ-քաղաքական վեպն էր ռուս գրականության մեջ։

«Ճղճիմ» ու «անպետք» մարդկանց աշխարհը վեպում ներկայացված է Ստորշնիկովների և Լոպուխովների աղնվականական ու մանրբուրժուական միջավայրով։ Չերնիշևսկին ցույց է տալիս, թե ինչպես է պարազիտիզմը կերել-փչացրել և քայքայել «աղնվականական բները»։ Կեղծիքն ու երեսպաշտությունը ընտանեկան հարաբերություններում, շահերի ճղճիմությունն ու անպետքությունը, խնջույքները, սիրային ցինիկ արկածները, «վատնումները» կազմում են այդ բոլոր միշելների, ժաների, սերժերի կենցաղի գլխավոր բովանդակությունը, որի մեջ տեղ չկա ո՛չ աշխատանքի, ո՛չ խղճի, ո՛չ մտավոր ու հասարակական շահերի համար։ Խիղճն այստեղ շուտով կկուրանա, աղնվությունը «կխամրի, տկար ու ճղճիմ սրտերում կնոջ առջև ասպետական «խոնարհանքը» կփոխարինվի կնամոլությամբ, անբարոյականությամբ, «փառահեղ» սիրուհիներով։ Աղնվականական ճահճի այդ նեխվածության ու կեղտի մեջ չի էլ կարող լավ բուսականություն աճել»,—համոզում է գրողը։ Ջղջա-

ցող գիշատիչ-կուտակող Պոլոզովի անձը լրացնում է ազնվականական հասարակության այլասերման այդ արտահայտիչ պատկերը։

«Ի՞նչ անել» վեպն ունի «Նոր մարդկանց մասին պատմվածքներից» ենթավերնագիրը։ «Նոր մարդիկ» հակադրվում են կեղծիքի ու կեղտի աշխարհին, դրանք ռուս գրականության նոր հերոսներն են, որ եկել են փոխարինելու «ավելորդ մարդկանց»։

Չերնիշևսկու վեպի հերոսները ռազնոչինցիներն են, աշխատավորական-դեմոկրատական միջավայրից ելածները։ Նրանք գիտեն իրական կյանքը։ Նրանց հատուկ է եռանդը, աշխատունակությունը, անկախությունը, «պլեբեյական հպարտությունը»։ Դրանք «գործի» մարդիկ են, «իրենց ողջ ապրելակերպով կարգին մարդիկ»։ Վեպի անսովոր «բացառիկ» հերոսը Ռախմետովն է, պրոֆեսիոնալ հեղափոխականը, մի մարդ, որն իրեն նվիրաբերել է մեծ գործին, ու թեև գրաքննչական պայմանների հետևանքով նա համեմատաբար քիչ է երևում վեպի էջերում, այնուամենայնիվ հենց նա է գլխավոր հերոսը, կենտրոնական դեմքը։ Ինքը՝ Չերնիշևսկին ընդգծում է Ռախմետովի բացառիկությունը. «նման մարդիկ, ինչպիսին նա է, քիչ են», «բայց նրանցով է ծաղկում բոլորի կյանքը, առանց նրանց այն կմեռներ, բայց նրանք բոլոր մարդկանց թույլ են տալիս շնչելու, առանց նրանց մարդիկ շնչահեղձ կլինեին... դրանք լավագույն մարդկանց ծաղիկն են, դրանք շարժիչների շարժիչն են, դրանք երկրի աղի աղն են» (XI, 210)։

Գալիք հեղափոխության գաղափարը կարմիր թելի պես անցնում է ամբողջ վեպի միջով, Չերնիշևսկու հերոսների պայքարի վերջնական նպատակը սոցիալիզմն էր։ Սոցիալիստական ապագայի լայն ու գեղեցիկ պատկերը գրողը տվել է Վերա Պավլովնայի չորրորդ երազում։

Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպը հսկայական ներգործություն է ունեցել ռուս հեղափոխականների սերունդների վրա։ Չերնիշևսկու մեծագույն ծառայությունը Լենինը համարում էր այն, որ նա ցույց տվեց, թե ինչպիսին պիտի լինի հեղափոխականը։ «Այդ ծառայության առջև,— գրել է նա,— խամրում են նրա բոլոր սխալները, մանավանդ որ գրանցում մեղավոր է ոչ այնքան նա, որքան նրա ժամանակի հասարակական հարաբերությունների անզարգացածությունը»[5]։

Ռուս մեծ մտածողը ազգային հարցի վերաբերյալ ևս ուներ առաջադիմական հեղափոխական տեսակետ։ Նա պայքարում էր ցարիզմի կողմից ռուսական տիրապետության մեջ մտնող ազգերի ճնշման դեմ, կանգնած էր նրանց ազատագրական շարժման կողմը։

Ռուսական հեղափոխական միտքը, և առաջին հերթին Չերնիշևսկու գաղափարները, հսկայական ազդեցություն են գործել նաև Ռուսաստանում բնակվող այլ ժողովուրդների վրա։ Չերնիշևսկու տաղանդավոր հետևորդներից էր, ինչպես հայտնի է, հայ ժողովրդի մեծ դավակ Միքայել Նալբանդյանը։

---

5 Տե՛ս «В. И. Ленин о литературе и искусстве», М., 1976, էջ 649—650։